

**5.13. Շրջակա բնական միջավայրի աղտոտվածության
2005թ. մայիս և հունիս ամիսների մոնիթորինգ**

Ըստ ՀՀ բնապահպանության նախարարության տեղեկատվության, հանրապետության բնական շրջակա միջավայրը 2005թ. մայիս և հունիս ամիսներին ունեցել է հետևյալ բնութագիրը:

Օդային ավազանի որակի մայիս ամսվա մոնիթորինգ: Մայիսին օդային ավազանի դիտարկումներ կատարվել են հանրապետության Երևան, Գյումրի, Վանաձոր, Հրազդան, Ալավերդի և Արարատ քաղաքներում տեղակայված 13 մշտական լաբորատոր դիտակայանների միջոցով:

Վերցվել է օդի 2513 փորձանմուշ, որոշվել են մթնոլորտն աղտոտող վերահսկվող նյութերի կոնցենտրացիաները:

- Երևան քաղաքում մայիսին վերցվել է օդի 1505 փորձանմուշ, որից 24-ը՝ փոշու, 101-ը՝ գետնամերձ օզոնի, 345-ական՝ ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի, ազոտի օքսիդի, և արոմատիկ ածխաջրածինների ու քլորոպրենի: Փոշու միջին ամսական սահմանային թույլատրելի կոնցենտրացիան (ՍԹԿ) գերազանցվել է 2.7, ծծմբի երկօքսիդինը՝ 2.6, ազոտի երկօքսիդինը՝ 3.3, գետնամերձ օզոնինը՝ 1.8, ազոտի օքսիդինը՝ 1.2 անգամ: Ազոտի երկօքսիդի և տոլուոլի միանվագ առավելագույն ՍԹԿ-ները գերազանցվել են համապատասխանաբար 4.7 և 2.4 անգամ: Ապրիլ ամսվա համեմատ փոշու միջին ամսական կոնցենտրացիան բարձրացել է 2.0, իսկ ազոտի երկօքսիդինը՝ 1.2 անգամ:

**Հսկվող աղտոտիչների առավելագույն և միջին ամսական կոնցենտրացիաները
ք.Երևանի մթնոլորտում 2005թ. մայիս ամսին**

Աղտոտիչ նյութերի անվանումը	Կոնցենտրացիաները, մգ/մ ³	
	առավելագույն	միջին ամսական
Փոշի	-	0.4
Ծծմբի երկօքսիդ	0.29	0.13
Ազոտի երկօքսիդ	0.40	0.13
Ազոտի օքսիդ	0.20	0.07
Գետնամերձ օզոն	0.154	0.055
Քլորոպրեն	-	-
Բենզոլ	0.375	0.098
Տոլուոլ	1.418	0.662
Քսիլոլ	-	-
Էթիլբենզոլ	-	-

- Գյումրի քաղաքում փոշու պարունակության որոշման համար վերցվել է օդի 24 փորձանմուշ: Փոշու միջին ամսական ՍԹԿ-ն գերազանցվել է 2.7 անգամ: Ապրիլ ամսվա համեմատ փոշու միջին ամսական կոնցենտրացիան բարձրացել է 1.3 անգամ:
- Վանաձոր քաղաքում վերցվել է օդի 480 փորձանմուշ, որից 48-ը՝ փոշու, 216-ական՝ ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի: Փոշու և ազոտի երկօքսիդի միջին ամսական ՍԹԿ-ները գերազանցվել են 1.3, ծծմբի երկօքսիդինը՝ 1.8 անգամ: Ազոտի երկօքսիդի միանվագ առավելագույն ՍԹԿ-ն գերազանցվել է 2.9 անգամ: Ապրիլ ամսվա համեմատ փոշու և ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները նվազել են համապատասխանաբար 1.5 և 1.2 անգամ:

**Հսկվող աղտոտիչների առավելագույն և միջին ամսական կոնցենտրացիաները
ք.Վանաձորի մթնոլորտում 2005թ. մայիս ամսին**

Աղտոտիչ նյութերի անվանումը	Կոնցենտրացիաները, մգ/մ ³	
	առավելագույն	միջին ամսական
Փոշի	-	0.2
Ծծմբի երկօքսիդ	0.19	0.09
Ազոտի երկօքսիդ	0.25	0.05

5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

- *Հրազդան քաղաքում ցեմենտի փոշու պարունակության որոշման համար վերցվել է օդի 24 փորձանմուշ: Փոշու միջին ամսական ՍԹԿ-ն գերազանցվել է 3.0 անգամ: Ապրիլ ամսվա համեմատ փոշու միջին ամսական կոնցենտրացիան նվազել է 1.3 անգամ:*
- *Ալավերդի քաղաքում վերցվել է օդի 456 փորձանմուշ, որից 24-ը՝ փոշու, 144-ական՝ ծծմբի երկօքսիդի, ածխածնի օքսիդի և ազոտի երկօքսիդի: Փոշու միջին ամսական ՍԹԿ-ն գերազանցվել է 1.3, ծծմբի երկօքսիդինը՝ 10.2 անգամ: Ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միանվագ առավելագույն ՍԹԿ-ները գերազանցվել են համապատասխանաբար 1.9 և 1.2 անգամ: Ապրիլ ամսվա համեմատ որոշվող նյութերի կոնցենտրացիաների էական փոփոխություն չի դիտվել:*

Հսկվող աղտոտիչների առավելագույն և միջին ամսական կոնցենտրացիաները ք.Ալավերդու մթնոլորտում 2005թ. մայիս ամսին

Աղտոտիչ նյութերի անվանումը	Կոնցենտրացիաները, մգ/մ ³	
	առավելագույն	միջին ամսական
Փոշի	-	0.2
Ծծմբի երկօքսիդ	0.96	0.51
Ածխածնի օքսիդ	5	2
Ազոտի երկօքսիդ	0.10	0.04

- *Արարատ քաղաքում ցեմենտի փոշու պարունակության որոշման համար վերցվել է օդի 24 փորձանմուշ: Փոշու միջին ամսական ՍԹԿ-ն գերազանցվել է 3.0 անգամ: Ապրիլ ամսվա համեմատ փոշու միջին ամսական կոնցենտրացիան բարձրացել է 1.5 անգամ:*

Օդային ավազանի որակի հունիս ամսվա մոնիթորինգ: Հունիսին օդային ավազանի դիտարկումներ կատարվել են հանրապետության Երևան, Գյումրի, Վանաձոր, Հրազդան, Ալավերդի և Արարատ քաղաքներում տեղակայված 13 մշտական լաբորատոր դիտակայանների միջոցով:

Վերցվել է օդի 2718 փորձանմուշ, որոշվել են մթնոլորտն աղտոտող վերահսկվող նյութերի կոնցենտրացիաները:

- *Երևան քաղաքում հունիսին վերցվել է օդի 1626 փորձանմուշ, որից 26-ը՝ փոշու, 109-ը՝ գետնամերձ օզոնի, 384-ական՝ ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի, ազոտի օքսիդի և 339-ը՝ արոմատիկ ածխաջրածինների ու քլորոպրենի: Փոշու միջին ամսական սահմանային թույլատրելի կոնցենտրացիան (ՍԹԿ) գերազանցվել է 2.0, ծծմբի երկօքսիդինը՝ 2.8, ազոտի երկօքսիդինը՝ 3.0, գետնամերձ օզոնինը՝ 2.5 անգամ: Ազոտի երկօքսիդի միանվագ առավելագույն ՍԹԿ-ն գերազանցվել է 4.9, գետնամերձ օզոնինը՝ 1.5, տոլուոլինը՝ 1.4 անգամ: Մայիս ամսվա համեմատ փոշու միջին ամսական կոնցենտրացիան նվազել է 1.3, իսկ գետնամերձ օզոնինը՝ բարձրացել նույնքան անգամ:*

Հսկվող աղտոտիչների առավելագույն և միջին ամսական կոնցենտրացիաները ք.Երևանի մթնոլորտում 2005թ. հունիս ամսին

Աղտոտիչ նյութերի անվանումը	Կոնցենտրացիաները, մգ/մ ³	
	առավելագույն	միջին ամսական
Փոշի	-	0.3
Ծծմբի երկօքսիդ	0.34	0.14
Ազոտի երկօքսիդ	0.42	0.12
Ազոտի օքսիդ	0.22	0.06
Գետնամերձ օզոն	0.241	0.074
Քլորոպրեն	-	-
Բենզոլ	1.126	0.097
Տոլուոլ	0.815	0.388
Քսիլոլ	-	-
Էթիլբենզոլ	-	-

5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

- *Գյուևրի քաղաքում փոշու պարունակության որոշման համար վերցվել է օդի 26 փորձանմուշ: Փոշու միջին ամսական ՍԹԿ-ն գերազանցվել է 2.7 անգամ: Մայիս ամսվա համեմատ փոշու միջին ամսական կոնցենտրացիայի փոփոխություն չի դիտվել:*
- *Վանաձոր քաղաքում վերցվել է օդի 520 փորձանմուշ, որից 52-ը՝ փոշու, 234-ական՝ ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի: Փոշու և ծծմբի երկօքսիդի միջին ամսական ՍԹԿ-ները գերազանցվել են 2.0-ական, ազոտի երկօքսիդինը՝ 1.3 անգամ: Ազոտի երկօքսիդի միանվագ առավելագույն ՍԹԿ-ն գերազանցվել է 1.4 անգամ: Մայիս ամսվա համեմատ փոշու միջին ամսական կոնցենտրացիան բարձրացել է 1.5 անգամ:*

Հսկվող աղտոտիչների առավելագույն և միջին ամսական կոնցենտրացիաները ք.Վանաձորի մթնոլորտում 2005թ. հունիս ամսին

Աղտոտիչ նյութերի անվանումը	Կոնցենտրացիաները, մգ/մ ³	
	առավելագույն	միջին ամսական
Փոշի	-	0.3
Ծծմբի երկօքսիդ	0.27	0.10
Ազոտի երկօքսիդ	0.12	0.05

- *Հրազդան քաղաքում ցեմենտի փոշու պարունակության որոշման համար վերցվել է օդի 26 փորձանմուշ: Փոշու միջին ամսական ՍԹԿ-ն գերազանցվել է 7.0 անգամ: Մայիս ամսվա համեմատ փոշու միջին ամսական կոնցենտրացիան բարձրացել է 2.3 անգամ:*
- *Ալավերդի քաղաքում վերցվել է օդի 494 փորձանմուշ, որից 26-ը՝ փոշու, 156-ական՝ ծծմբի երկօքսիդի, ածխածնի օքսիդի և ազոտի երկօքսիդի: Փոշու միջին ամսական ՍԹԿ-ն գերազանցվել է 1.3, ծծմբի երկօքսիդինը՝ 9.6 անգամ: Ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միանվագ առավելագույն ՍԹԿ-ները գերազանցվել են համապատասխանաբար՝ 1.9 և 1.2 անգամ: Մայիս ամսվա համեմատ որոշվող նյութերի կոնցենտրացիաների էական փոփոխություն չի դիտվել:*

Հսկվող աղտոտիչների առավելագույն և միջին ամսական կոնցենտրացիաները ք.Ալավերդու մթնոլորտում 2005թ. հունիս ամսին

Աղտոտիչ նյութերի անվանումը	Կոնցենտրացիաները, մգ/մ ³	
	առավելագույն	միջին ամսական
Փոշի	-	0.2
Ծծմբի երկօքսիդ	0.92	0.48
Ածխածնի օքսիդ	5.0	2.0
Ազոտի երկօքսիդ	0.10	0.04

- *Արարատ քաղաքում ցեմենտի փոշու պարունակության որոշման համար վերցվել է օդի 26 փորձանմուշ: Փոշու միջին ամսական ՍԹԿ-ն գերազանցվել է 4.0 անգամ: Մայիս ամսվա համեմատ փոշու միջին ամսական կոնցենտրացիան բարձրացել է 1.3 անգամ:*

Մակերևութային ջրերի որակի մայիս ամսվա մոնիթորինգ: Մայիսին մակերևութային ջրերի նմուշառ կատարվել է հանրապետության 21 գետերից, Երևանյան լճից, Սևանա լճից և Արփա-Սևան ջրատարից:

Վերցվել է 58 փորձանմուշ, որոշվել է 2559 ցուցանիշ (10-ում որոշվել է 41 ցուցանիշ, 11-ում՝ 44, 37-ում՝ 47):

Փամբակ գետի ավազանից վերցված փորձանմուշներում ամոնիում իոնի ՍԹԿ-ն գերազանցվել է 1.5-3.2, նիտրիտ իոնինը՝ 1.5-2.1 անգամ:

Դեբեդ գետի ավազանից վերցված փորձանմուշներում ամոնիում իոնի ՍԹԿ-ն գերազանցվել է 1.8-2.1, նիտրիտ իոնինը՝ 2.1-2.9 անգամ:

Չորագետ, Ախթալա և Մարցիգետ գետերի գետաբերանների շրջանում ամոնիում իոնի ՍԹԿ-ն գերազանցվել է 1.8-2.0, նիտրիտ իոնինը՝ 1.3-1.7 անգամ:

Ախթալա գետի գետաբերանի շրջանում սուլֆատ իոնի ՍԹԿ-ն գերազանցվել է 1.6 անգամ: Վանաձոր քաղաքից և Այրում գետից ներքև, ինչպես նաև Մարցիգետի գետաբերանի մոտ ընկած հատվածքներում ԹԿՊ₅-ի ՍԹԿ-ն գերազանցվել է 1.2-1.3 անգամ:

Սևջուր և Յրազդան գետերի ավազաններից վերցված փորձանմուշներում գերազանցվել են նիտրիտ, նիտրատ, ամոնիում և սուլֆատ իոնների ՍԹԿ-ները: Յրազդան գետում՝ Դարբնիկ գյուղից ներքև և գետաբերանի մոտ ընկած հատվածքներում, ամոնիում իոնի ՍԹԿ-ն գերազանցվել է համապատասխանաբար 56.0 և 58.8 անգամ: Յրազդան գետի գետաբերանի մոտ ընկած հատվածքում դիտվել է թթվածնային ռեժիմի անբավարարություն՝ թթվածնի պարունակությունը կազմել է 3.9 մգ/դմ³: Յրազդան գետի վերին հոսանքներում, Սևջուր և Մարմարիկ գետերի գետաբերանների շրջանում նիտրատ իոնի ՍԹԿ-ն գերազանցվել է 4.2-6.2 անգամ: Սևջուր գետում, Յրազդան գետի Երևան քաղաքից ներքև ընկած հատվածքում և Գետառի գետաբերանի մոտ նիտրիտ իոնի ՍԹԿ-ն գերազանցվել է 2.0-5.2 անգամ:

Սևանա լճի ավազանի գետերից վերցված փորձանմուշներում ամոնիում իոնի ՍԹԿ-ն գերազանցվել է 1.1-5.4 անգամ (Գավառագետի գետաբերանի շրջանում՝ 8.0 անգամ): Ծակքար գետի գետաբերանի շրջանում նիտրատ իոնի ՍԹԿ-ն գերազանցվել է 1.2 անգամ: Մասրիկ, Կարճաղբյուր, Արգիճի, Ծակքար գետերի գետաբերաններից վերցված փորձանմուշներում վանադիումի ՍԹԿ-ն գերազանցվել է 3.6 անգամ (Գավառագետի գետաբերանից վերցված փորձանմուշում՝ 9.0 անգամ):

Սևանա լճից վերցված փորձանմուշներում մագնեզիում իոնի թույլատրելի ՍԹԿ-ն գերազանցվել է 1.2-1.4 անգամ, բրոմինը՝ 1.5-2.3 անգամ: Լճի արևելյան ափից վերցված փորձանմուշներում դիտվել են նաև թթվածնային ռեժիմի աննշան անբավարարության դեպքեր:

5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Սակերևութային ջրերի աղտոտվածության վիճակը 2005թ. մայիս ամսին

Անվանումը	Դիտակետի համարը	Դիտակետը (հատվածքը)	ՍԹԿ-ն գերազանցող միացությունների քանակը							
			ԹԿ ₁₅ (ՍԹԿ՝ 3 մգ/լմ ³)	Նիտրիտ իոն (ՍԹԿ՝ 0.024 մգN/լմ ³)	Նիտրատ իոն (ՍԹԿ՝ 9.1 մգN/լմ ³)	Ամոնիում իոն (ՍԹԿ՝ 0.39 մգN/լմ ³)	Նավթամթերք (ՍԹԿ՝ 0.05 մգ/լմ ³)	Սուլֆատ իոն (ՍԹԿ՝ 100 մգ/լմ ³)	Սազնեզիում իոն	Իոնների գումարը (ՍԹԿ՝ 1000 մգ/լմ ³)
Փամբակ	2	ք.Սպիտակից 0.5 կմ ներքև	-	0.035	-	-	-	-	-	-
	3	ք.Վանաձորից 0.6 կմ վերև	-	0.040	-	0.58	-	-	-	-
	4	ք.Վանաձորից 4.5 կմ ներքև	-	0.050	-	1.26	-	-	-	-
Դեբեդ	5	Մարցիգետի թափման կետից 0.5 կմ ներքև	-	0.053	-	0.82	-	-	-	-
	6	Այրումից 0.5 կմ վերև	-	0.050	-	0.69	-	-	-	-
	7	Սահմանի մոտ	-	0.070	-	0.74	-	-	-	-
Չորագետ	10	Գետաբերան	-	0.040	-	0.72	-	-	-	-
Մարցիգետ	13	Գետաբերան	-	0.030	-	0.78	-	-	-	-
Ախթալա	14	Գետաբերան	-	0.040	-	0.69	-	157.40	-	-
Սևջուր	41	ք.Վաղարշապատից 11 կմ հարավ-արևելք	-	0.082	11.27	2.80	-	233.48	-	-
	42	Ռանչպար գյուղից 0.5 կմ ներքև	-	0.058	-	3.24	-	188.54	-	-
Քասախ	47	Գետաբերան	-	0.058	16.17	4.01	-	112.13	-	-
Հրազդան	52	Քաղսի գյուղից 0.5 կմ ներքև	-	-	27.37	1.60	-	-	-	-
	53	Արգել գյուղից 0.5 կմ ներքև	-	-	56.32	3.03	-	-	-	-
	54	Արզնի ՂԷԿ-ից 0.5 կմ ներքև	-	-	38.71	2.99	-	-	-	-
	55	Դարբնիկ գյուղի մոտ	-	0.096	-	21.84	-	-	-	-
	56	Գետաբերան	-	0.125	-	22.95	-	143.60	-	-
Մարմարիկ	58	Գետաբերան	-	-	19.09	0.74	-	-	-	-
Գետառ	59	Գետաբերան	-	0.144	-	0.74	-	-	-	-
Չկնագետ	61	Գետաբերան	-	-	-	0.65	-	-	-	-
Մասրիկ	63	Գետաբերան	-	-	-	1.00	-	-	-	-
Սոթք	64	Գետաբերան	-	-	-	0.42	-	-	-	-
Կարճաղ-բյուր	67	Գետաբերան	-	-	-	0.92	-	-	-	-
Արփա-Սևան թունել	68	Ծովինար գյուղից 0.7 կմ վերև	-	-	-	1.21	-	-	-	-
Վարդենիս	70	Գետաբերան	-	-	-	1.29	-	-	-	-
Մարտունի	72	Գետաբերան	-	-	-	2.12	-	-	-	-
Արգիճի	74	Գետաբերան	-	-	-	0.87	-	-	-	-
Ծակքար	76	Գետաբերան	-	-	10.58	1.77	-	-	-	-
Գավառա-գետ	77	Ծաղկավան գյուղից 0.5 կմ վերև	-	-	-	0.909	-	-	-	-
	78	Գետաբերան	-	-	-	3.114	-	-	-	-
Երևանյան լիճ	112	Գետաբերանի թափման կետից ներքև	-	0.048	-	0.738	-	-	-	-

5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Անվանումը	Դիտակետը (հատվածքը)	ՍԹԿ-ն գերազանցող միացությունների քանակը								
		ԹԿՊ ₅ (ՍԹԿ՝ 3 մգ/դմ ³)	Նիտրիտ իոն (ՍԹԿ՝ 0.024 մգN/դմ ³)	Նիտրատ իոն (ՍԹԿ՝ 9.1 մգN/դմ ³)	Ամոնիում իոն (ՍԹԿ՝ 0.39 մգN/դմ ³)	Նալթամթերք (ՍԹԿ՝ 0.05 մգ/դմ ³)	Սուլֆատ իոն (ՍԹԿ՝ 100 մգ/դմ ³)	Սագնեգիում իոն	Իոնների գումարը (ՍԹԿ՝ 1000 մգ/դմ ³)	
Սևանա լիճ	115	Թերակղզուց 3.5 կմ արևելք	-	-	-	-	-	-	-	
	116	Թերակղզուց 70 ⁰ A	-	-	-	-	-	51.11	-	
	117	Չկնազետի գետաբերանի շրջանում մակերեսից		-	-	-	-	-	53.48	-
		20 մ խորությունից		-	-	-	-	-	52.92	-
	118	Շորժա գյուղից 0.5 կմ հարավ-արևմուտք մակերեսից		-	-	-	-	-	54.31	-
		Շորժա գյուղից 6.6 կմ, 225 ⁰ A հարավ, հարավ-արևմուտք մակերեսից		-	-	-	-	-	54.25	-
	119	20 մ խորությունից		-	-	-	-	-	54.94	-
		Արտանիշ ավանից 2 կմ, 135 ⁰ A լճի մակերևույթից		-	-	-	-	-	54.49	-
	120	20 մ խորությունից		-	-	-	-	-	54.35	-
		Փամբակ գյուղից 10 կմ, 270 ⁰ A լճի մակերևույթից		-	-	-	-	-	54.58	-
	121	20 մ խորությունից		-	-	-	-	-	53.56	-
		Փամբակ գյուղից 2.2 կմ, 255 ⁰ A լճի մակերևույթից		-	-	-	-	-	55.11	-
	122	20 մ խորությունից		-	-	-	-	-	53.96	-
		Փամբակ գյուղից 13 կմ, 235 ⁰ A լճի մակերևույթից		-	-	-	-	-	53.60	-
	123	20 մ խորությունից		-	-	-	-	-	57.22	-
		Մասրիկ գետի գետաբերանի շրջանում		-	-	-	-	-	55.47	-
	124	Կարճաղբյուր գետի գետաբերան շրջանում		-	-	-	-	-	54.82	-
	125	Արփա-Սևան թունելի ելքի մոտ		-	-	-	-	-	55.31	-
	126	Մարտունի գետի գետաբերանի շրջանում		-	-	-	-	-	54.20	-
	127	Երանոս գյուղից 15 կմ, 90 ⁰ A լճի մակերևույթից		-	-	-	-	-	54.46	-
		20 մ խորությունից		-	-	-	-	-	52.96	-
	128	Երանոս գյուղից 24 կմ, 90 ⁰ A լճի մակերևույթից		-	-	-	-	-	52.09	-
		20 մ խորությունից		-	-	-	-	-	52.21	-
	129	Նորադուզ գյուղից 7 կմ հյուսիս		-	-	-	-	-	48.96	-
		Չկալովկա գյուղից 7.5 կմ հյուսիս լճի մակերևույթից		-	-	-	-	-	53.93	-
	130	20 մ խորությունից		-	-	-	-	-	54.81	-

Մակերևութային ջրերի որակի հունիս ամսվա մոնիթորինգ: Հունիսին մակերևութային ջրերի նմուշառ կատարվել է հանրապետության 21 գետերից, Երևանյան լճից, Սևանա լճից և Կեչուտի ջրամբարից:

Վերցվել է 77 փորձամնուշ, որոշվել է 2823 ցուցանիշ (10-ում որոշվել է 41 ցուցանիշ, 26-ում՝ 25, 41-ում՝ 43):

Փամբակ գետի ավազանից վերցված փորձանմուշներում ամոնիում իոնի ՍԹԿ-ն գերազանցվել է 1.5-3.9, նիտրիտ իոնինը՝ 1.2-1.6 անգամ (Վանաձոր քաղաքից ներքև ընկած հատվածից վերցված փորձանմուշում՝ 5.8 անգամ):

Դեբեդ գետի ավազանից վերցված փորձանմուշներում ամոնիում իոնի ՍԹԿ-ն գերազանցվել է 1.5-2.0, նիտրիտ իոնինը՝ 2.3-2.5 անգամ (Մարցիգետի թափման կետից ներքև ընկած հատվածից վերցված փորձանմուշում՝ 5.4 անգամ):

Ձորագետ, Ախթալա և Մարցիգետ գետերի գետաբերանների շրջանում ամոնիում իոնի ՍԹԿ-ն գերազանցվել է 1.4-4.6 անգամ: Ձորագետ և Ախթալա գետերի գետաբերանների մոտ ընկած հատվածներում նիտրատ իոնի ՍԹԿ-ն գերազանցվել է 1.3-4.4 անգամ:

Ախթալա գետի գետաբերանի շրջանում սուլֆատ իոնի ՍԹԿ-ն գերազանցվել է 3.2 անգամ: Դիտվել է նաև կախված մասնիկների բարձր կոնցենտրացիա՝ 648.9 մգ/դմ³:

Սևջուր և Հրազդան գետերի ավազաններից վերցված փորձանմուշներում գերազանցվել են լուծված թթվածնի, ԹԿՊ₅-ի, մանգանի, նիտրիտ, ամոնիում, պղինձ, մագնեզիում և նատրիում իոնների ՍԹԿ-ները: Հրազդան գետում՝ Դարբնիկ գյուղից ներքև և գետաբերանի մոտ ընկած հատվածներում, դիտվել է արտակարգ բարձր աղտոտվածություն՝ լուծված թթվածնի պարունակությունը կազմել է համապատասխանաբար 1.19 մգ/դմ³ և 2.20 մգ/դմ³: Հրազդան գետում՝ Դարբնիկ գյուղից ներքև ընկած հատվածներում, ամոնիում իոնի ՍԹԿ-ն գերազանցվել է 18.6 անգամ:

Գետառ գետի գետաբերանից վերցված փորձանմուշում նիտրիտ իոնի ՍԹԿ-ն գերազանցվել է 11.6 անգամ: Սևջուր գետի՝ Վաղարշապատ քաղաքից ներքև, և Հրազդան գետի Գեղամավան գյուղի մոտ ընկած հատվածներից վերցված փորձանմուշներում դիտվել է թթվածնային ռեժիմի անբավարարություն՝ լուծված թթվածնի պարունակությունը կազմել է համապատասխանաբար 5.33 մգ/դմ³ և 5.26մգ/դմ³: Գետառ գետի գետաբերանից վերցված փորձանմուշում ԹԿՊ₅-ի ՍԹԿ-ն գերազանցվել է 2.1 անգամ: Սևջուր և Հրազդան գետերում նիտրիտ իոնի ՍԹԿ-ն գերազանցվել է 1.5-5.4 անգամ: Հրազդան գետից և Գետառի գետաբերանից վերցված փորձանմուշներում ամոնիում իոնի ՍԹԿ-ն գերազանցվել է 1.4-5.5 անգամ: Քասաղ գետի գետաբերանից վերցված փորձանմուշում պղինձ իոնի ՍԹԿ-ն գերազանցվել է 11.0 անգամ, Սևջուր գետի՝ Էջմիածին քաղաքից վերև, Հրազդան գետից և Գետառի գետաբերանից վերցված փորձանմուշներում՝ 2.0-6.0 անգամ: Սևջուր գետում մագնեզիում իոնի ՍԹԿ-ն գերազանցվել է 1.4-1.6 անգամ: Հրազդան գետի Դարբնիկ գյուղի մոտ ընկած հատվածից և Գետառ գետի գետաբերանից վերցված փորձանմուշներում նատրիում իոնի ՍԹԿ-ն գերազանցվել է 1.3-2.9 անգամ: Հրազդան գետի Դարբնիկ գյուղի և գետաբերանի մոտ ընկած հատվածներում մանգանի ՍԹԿ-ն գերազանցվել է 1.3-1.6 անգամ:

Արաքս, Ազատ, Վեդի, Արփա, Մեղրիգետ, Ողջի, Արծվանիկ, Գեղի, Որոտան, Սիսիան, Գորիսգետ գետերից և Կեչուտի ջրամբարից վերցված փորձանմուշներում գերազանցվել են լուծված թթվածնի, իոնների գումարի, նիտրատ, նիտրիտ, ամոնիում, սուլֆատ, պղինձ իոնների, ալյումինիումի, բրոմի ՍԹԿ-ները: Ազատ և Արծվանիկ գետերի գետաբերաններից, Որոտան գետի Սիսիան քաղաքից ներքև ընկած և Գորիսգետ գետի Գորիս քաղաքից վերև ու ներքև ընկած հատվածներից վերցված փորձանմուշներում ամոնիում իոնի ՍԹԿ-ն գերազանցվել է 17.4-76.3 անգամ: Մյուս դիտակետերից վերցված փորձանմուշներում ամոնիում իոնի ՍԹԿ-ն գերազանցվել է 2.0-4.8 անգամ (Արաքս գետից վերցված փորձանմուշներում և Որոտան գետի Սիսիան քաղաքից վերև ընկած հատվածում՝ 9.5-12.3 անգամ):

Ազատ գետի գետաբերանից վերցված փորձանմուշում նիտրիտ իոնի ՍԹԿ-ն գերազանցվել է 13.0 անգամ: Մյուս դիտակայաններից վերցված փորձանմուշներում նիտրիտ իոնի ՍԹԿ-ն գերազանցվել է 1.2-2.6, նիտրատ իոնինը՝ 1.3-5.2, պղինձ իոնինը՝ 1.5-5.0 անգամ (Վեդի գետի Ուրցաձոր գյուղից վերև ընկած հատվածում՝ 10.0 անգամ):

Արաքս, Ազատ, Արծվանիկ գետերից վերցված փորձանմուշներում սուլֆատ իոնի ՍԹԿ-ն գերազանցվել է 1.2-2.2 անգամ: Ազատ գետի գետաբերանից վերցված

5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

փորձանմուշում իոնների գումարի ՍԹԿ-ն գերազանցվել է 1.3, ալյումինիումինը՝ 1.4, բրոմինը՝ 1.2 անգամ:

Երևանյան լճում նիտրիտ իոնի ՍԹԿ-ն գերազանցվել է 10.8, ամոնիում իոնինը՝ 1.2, պղինձ իոններինը՝ 2.0, ԹԿՊ₅-ը՝ 1.2 անգամ:

Սևանա լճի Փամբակ գյուղի մոտ ընկած հատվածքից մակերևութից և 20 մ խորությունից վերցված փորձանմուշներում դիտվել է թթվածնային ռեժիմի անբավարարություն՝ լուծված թթվածնի պարունակությունը կազմել է 5.53 և 5.17 մգ/դմ³:

Հսկվող մյուս աղտոտիչների կոնցենտրացիաները եղել են նորմաների սահմաններում:

Սակերևութային ջրերի աղտոտվածության վիճակը 2005թ. հունիս ամսին

Անվանումը	Դիտակետի համարը	Դիտակետը (հատվածքը)	ՍԹԿ-ն գերազանցող միացությունների քանակը							
			ԹԿՊ ₅ (ՍԹԿ՝ 3 մգ/դմ ³)	Նիտրիտ իոն (ՍԹԿ՝ 0.024 մգ/դմ ³)	Նիտրատ իոն (ՍԹԿ՝ 9.1 մգ/դմ ³)	Ամոնիում իոն (ՍԹԿ՝ 0.39 մգ/դմ ³)	Տավթամթերք (ՍԹԿ՝ 0.05 մգ/դմ ³)	Սուլֆատ իոն (ՍԹԿ՝ 100 մգ/դմ ³)	Սազնեզվում իոն	Իոնների գումարը (ՍԹԿ՝ 1000 մգ/դմ ³)
Փամբակ	2	ք.Սպիտակից 0.5 կմ ներքև	-	0.039	-	-	-	-	-	-
	3	ք.Վանաձորից 0.6 կմ վերև	-	0.028	-	0.59	-	-	-	-
	4	ք.Վանաձորից 4.5 կմ ներքև	-	0.138	-	1.50	-	-	-	-
Դեբեդ	5	Մարցիգետի թափման կետից 0.5 կմ ներքև	-	0.129	-	0.78	-	-	-	-
	6	Այրումից 0.5 կմ վերև	-	0.056	-	0.58	-	-	-	-
	7	Սահմանի մոտ	-	0.060	-	0.58	-	-	-	-
Չորագետ	10	Գետաբերան	-	0.032	-	0.62	-	-	-	-
Մարցիգետ	13	Գետաբերան	-	-	-	0.54	-	-	-	-
Ախթալա	14	Գետաբերան	-	1.105	-	1.80	-	315.2	-	-
Արաքս	28	Արմաշ գյուղից 0.5 կմ ներքև	-	0.034	39.21	4.79	-	128.5	-	-
	29	Ագարակ գյուղից 2 կմ վերև	-	0.029	46.60	3.71	-	124.9	-	-
	30	Ագարակ գյուղից 2.5 կմ ներքև	-	0.031	11.63	4.35	-	-	-	-
Սևջուր	40	ք.Վաղարշապատից 10 կմ հարավ	-	0.072	-	-	-	-	63.7	-
	41	ք.Վաղարշապատից 11 կմ հարավ-արևելք	-	0.072	-	-	-	-	57.7	-
	42	Ռանչպար գյուղից 0.5 կմ ներքև	-	0.062	-	-	-	-	56.9	-
Քասախ	47	Գետաբերան	-	0.077	-	-	-	-	-	-
Հրազդան	51	Գեղամավան գյուղի մոտ	-	-	-	0.68	-	-	-	-
	52	Քաղսի գյուղից 0.5 կմ ներքև	-	0.036	-	-	-	-	-	-
	53	Արգել գյուղից 0.5 կմ ներքև	-	0.041	-	-	-	-	-	-
	54	Արգնի ՀԷԿ-ից 0.5 կմ ներքև	-	0.058	-	0.55	-	-	-	-
	55	Դարբնիկ գյուղի մոտ	-	-	-	7.25	-	-	-	-
56	Գետաբերան	-	0.131	-	2.13	-	-	-	-	
Մարմարիկ	58	Գետաբերան	-	0.036	-	-	-	-	-	-
Գետառ	59	Գետաբերան	2.1	0.278	-	1.56	-	-	-	-
Ագատ	79	Գետաբերան	-	0.312	-	29.75	-	217.6	-	1268
Վեդի	80	Ուրցածոր գյուղից 0.5 կմ վերև	-	-	-	1.88	-	-	-	-
Արփա	83	ք.Ջերմուկից 0.5 կմ վերև	-	-	16.85	-	-	-	-	-
	84	ք.Վայքից 0.5 կմ վերև	-	-	11.50	1.09	-	-	-	-
	85	ք.Վայքից 0.5 կմ ներքև	-	-	11.85	1.07	-	-	-	-
	86	ք.Եղեգնաձորից 0.5 կմ վերև	-	-	13.94	1.11	-	-	-	-
	87	Արենի գյուղից 0.5 կմ ներքև	-	-	-	1.12	-	-	-	-
Մեղրիգետ	89	ք.Մեղրիից 0.5 կմ վերև	-	-	-	0.78	-	-	-	-
	90	Գետաբերան	-	-	-	1.29	-	-	-	-
Ողջի	91	ք.Քաջարանից 1.7 կմ վերև	-	-	26.77	-	-	-	-	-
	92	ք.Քաջարանից 1.8 կմ ներքև	-	-	33.90	-	-	-	-	-
	93	ք.Կապանից 6.8 կմ ներքև	-	-	27.86	-	-	-	-	-
	94	ք.Կապանից 6.8 կմ ներքև	-	-	27.21	0.87	-	-	-	-

5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Անվանումը	Դիտակետի համարը	Դիտակետը (հատվածքը)	ՍՈԿ-ն գերազանցող միացությունների քանակը								
			ԹՎՊ ₅ (ՍՈԿ՝ 3 մգ/դմ ³)	Նիտրիտ իոն (ՍՈԿ՝ 0.024 մգN/դմ ³)	Նիտրատ իոն (ՍՈԿ՝ 9.1 մգN/դմ ³)	Ամոնիում իոն (ՍՈԿ՝ 0.39 մգN/դմ ³)	Նավթամթերք (ՍՈԿ՝ 0.05 մգ/դմ ³)	Սուլֆատ իոն (ՍՈԿ՝ 100 մգ/դմ ³)	Մագնեզիում իոն	Իոնների զումայրը (ՍՈԿ՝ 1000 մգ/դմ ³)	
Արծվանիկ	95	Պոչամբարից 0.5 կմ վերև	-	-	27.21	-	-	-	181.3	-	-
	96	Գետաբերան	-	-	27.21	8.68	-	-	-	-	-
Գեղի	97	Աջաբաջ գյուղից 0.5 կմ վերև	-	-	20.65	-	-	-	-	-	-
	98	Գետաբերան	-	-	21.25	-	-	-	-	-	-
Որոտան	99	Գորայք գյուղից 0.5 կմ վերև	-	-	22.92	1.07	-	-	-	-	-
	100	ք.Սիսիանից 1 կմ վերև	-	0.048	-	3.97	-	-	-	-	-
	101	ք.Սիսիանից 2 կմ ներքև	-	-	17.75	6.77	-	-	-	-	-
	102	Որոտանից 0.5 կմ ներքև	-	-	17.75	-	-	-	-	-	-
Սիսիան	103	Արևաիկ գյուղից 0.5 կմ վերև	-	-	17.75	-	-	-	-	-	
Գորիսգետ	106	ք.Գորիսից 3 կմ վերև	-	0.62	12.72	7.74	-	-	-	-	-
	107	ք.Գորիսից 1.5 կմ ներքև	-	-	31.59	22.69	-	-	-	-	-
Երևանյան լիճ	112	Գետառի թափման կետից վերև	3.67	0.259	-	0.48	-	-	-	-	-
Կեչուտի ջրամբար	114	Ամբարտակի մոտ	-	-	12.39	-	-	-	-	-	-
Սևանա լիճ	122	Փամբակ գյուղից 2.2 կմ 255 ⁰ A	-	-	-	-	-	-	-	-	-
		լճի մակերևույթից	-	-	-	-	-	-	-	-	-
		20 մ խորությունից	-	-	-	-	-	-	-	-	-